ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱԼՈՒՐՔ

1850 թուականի մէջ և անկէ յետոյ եղած աստեղաբաշխական, բնաբանական և ուրիշ գլխաւոր գիւտերը [1]։

Բ.

Ռաձմաձիոս ապրիլ ամսոյն երկրորդ թուոյն մէջ դրած անցեալ տարուընէ ինչուան հիմայ եղած աստեղաբաշխական գլխաւոր գիւտերուն պատմութիւնը չի գլխաւորած, նոր մոլորակի մը ալ գիւտը կը ծանուցանենք մեր ընթերցողաց, զորն որ անցեալ մայիսի 19ին, ըստ նորոց, Հայնտ Ֆոնտրայի Երևելի աստեղաբաշխը գտաւ։ Օնոյնը Լատիոլիի տէ Կասպարիս երևելի աստեղաբաշխն ալ գտաւ նոյն ամսոյն 23ին գիշերը դեռ Ֆոնտրայի գիւտին լուրը չառած, և 24ին ու 25ին վրան կանոնաւոր դիտողութիւններ ըրաւ միջօրէական շրջանակով։ Լանդինի Պատուայի դիտարանին աստեղաբաշխն ալ յունիսի 2ին և 3ին իրիկունները դիտեց այս մոլորակը։

Հոս դնենք Ֆոնտրայի, Լատիոլիի ու Պատուայի դիտողութիւնները, որոնցմէ առաջինը Կրինիչի միջօրէականէն հաշուած է, մէկալներնք ալ իւրաքանչիւր իրենց դիտարանին միջօրէէն։

1851	Մ. ԺԱՄԱՆԱԿ	ՈՒՂ. ԵԼՔ.	ԽՈՏՈՐՈՒՄՆ.
19 մայիս	12ժ 52′ 36″	241° 2′ 36,″2	−13° 23′ 34,″9
24 „	11 51 23	239 48 51, 8	−13 31 16, 8
25 „	11 47 27	239 33 53, 7	−13 33 27, 3
2 յունիս	11 7 26	237 38 29, 0	−13 50 19, 7
3 „	11 2 36	237 24 48, 9	−13 52 49, 3

Այս մոլորակս 8-9երորդ կարգի աստեղաց կերպարանք ունի. լոյսն սպիտակ և հանդարտ է։

Անցեալ դարուն կիսէն սկսեալ ուսումնական դիտեր էին որ Կասպից ծովուն մակերևոյթը ովկիանոսի երեսէն շատ ցած է։ 1812ին Ֆնկէլհարդ և Փարրոդ ուզեցին այս բանս հարթաչափութեամբ ու ծանրաչափական չափմունքներով ստուգել։ Ալ մի կերպով իմացուեցաւ որ Կասպից ծովուն երեսը 105 մեդր ցած է սև ծովուն երեսէն, իսկ երկրորդ կերպով միայն 91 մեդր։ Բայց սակայն այս չափերը չի կրցան գոհ ընել հետաքննին գիտնականաց միտքը. ռուսի տէրութիւնը Փէթրպուրկի գիտութեց Ճեմարանին 50 հազար արծաթ ռուպլի տուաւ որ այս ծովուն Ճշմարիտ հարթութիւնը ստուգել տայ, հիմայ ուսումնական օրագիրներէն կը լսենք որ ռուս Ճարտարապետներ վերջապէս չափեր իմացեր են որ Կասպից ծովուն երեսը միջերկրականէն 26 մեդր ցած է։

[1] Տես Ա. յօդուածը երես 125։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Նախախնամութիւն այդելոս։

„ Աւա՜ղ, չբաւա՞ մահացուին
„ Լծով անկեալ ընդ բաղդին,
„ Ի ազայ տիոց ցաւոյթ
„ Գընայ ընդ խոչ և ընդ խութ։
„ Վարէ զնա սուր ամանակ.
„ Եւ անցելոյն դժկամակ՝
„ Ի ներկայիս հապճեպով
„ Յապառնւոյն խոր մթեալ ծով,
„ Զերջանկութիւն հայցէ զուր
„ Եւ մեռանի թաքթաքուր։
„ Իսկ թէ բնաւ հեշտ վաղանցիկ
„ Դիւրէ զվերջոյց վայրկենիկ,
„ Նա մենաւոր գրեսցի վարդ
„ Ի մեռելոց բուսեալ սարդ։
„ Դու, որոյ ձեռն ատելի
„ Բաշխէ մեզ կեանս տաղտկալի,
„ Եւ յեռ սառեցմանն կայ յուրաստ,
„ Բարձ զիս յերից, Արամազդ „։
Զայս ի խարակս անգեղեայ
Դոչէր յափանց Տաւրիդեայ
Ընդ ծուփ ծովուն շառաչուկ
Նեպիմենիդ տրրամասուգ.
Ի գառնութեան թուխ մաղձին
Կառուցանէր զրիպս ակին